Սվետլանա Գրիգորյան

Դերասանուհի, ՀՀ ժողովրդական արտիստ

Ծնվել է 1930թ. Երևանում:

Դեռ թատերական ուսումնարանի սան էր՝ 13 տարեկան, երբ բեմ բարձրացավ:

Գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտելուց հետո Վարդան Աճեմյանի հրավերով գնում է Երաժշտական կոմեդիայի թատրոն, որտեղ խաղում է մինչ օրս:

Հիսունհինգ տարի եղել է հռչակավոր դերասան Կարպ Խաչվանքյանի խաղընկերը: Հեռուստաթատրոնի հիմնադիրներից է:

Խաղացել է հարյուրից ավելի դերեր. Սիմա՝ «Մի քաղաք կա Վոլգայի վրա», Մարիետա՝ «Բայադերա», Կոլոմբինա՝ «Վենետիկյան երկվորյակներ», Լիքսենա՝ «Պարերի ուսուցիչը», Նունուֆար՝ «Հին հիվանդություն», Մարթա՝ «Ատամնաբույժն արևելյան», Ժաննա՝ «Ռոզ Մարի», Նատա՝ «Սոֆիկի սխալը», Դիանա՝ «Այլոց համար հիմար, իրեն համար խելոք», Ռոզալյա՝ «Չանիտայի համբույրը», Ժիկվան՝ «Տիկին Միսիստրուին», Ռոզ՝ «Տաքսի-տաքսի», Սաթենիկ՝ «Իմ զոքանչը» և այլն:

Դերասանուհին այսօր էլ բեմում է: Հանդիսատեսը նրան կարող է տեսնել «Իմ զոքանչը», «Չարենցի ուղղիչ տունը», «Մեր տան տերերը» ներկայացումներում:

Հյուրախաղերով շրջել է աշխարհի բազմաթիվ երկրներում, արժանացել է միջազգային մրցանակների: 2009թ. Լոս Անջելեսում նրան է հանձնվել «Ծիծաղի թագուհի» բարձր տիտղոսը: Արժանացել է «Մովսես Խորենացի», «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» մեդալների: